Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2019 թ.
հուլիսի 26-ի N 1006 - Ա
որոշման

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ

ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Տ. Ավինյան	- ՀՀ փոխվարչապետ (հանձնաժողովի նախագահ)
Ս. Պետրոսյան	- ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ղեկավար (հանձնաժողովի նախագահի տեղակալ)
Վ. Տերտերյան	- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
Ի. Ղափլանյան	- ՀՀ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ
Ա. Ավանեսյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ա. Նազարյան	- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ
Գ. Վարդանյան	- ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ
Ն. Խաչատուրյան	- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ
Վ. Վերմիշյան	- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ
Գ. Գևորգյան	- ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ
Է. Մարտիրոսյան	- ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալ
Վ. Մովսիսյան	- ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ
Հ. Սարգսյան	- Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ (համաձայնությամբ)
Բ. Քոչարյան	- ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ղեկավարի խորհրդական (հանձնաժողովի քարտուղար)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2019 թ.
հուլիսի 26-ի N 1006-Ա
որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ԻՆՏԵԳՐՎԱԾ ԿԱԴԱՍՏՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՑ ԲԽՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ինտեգրված կադաստրի հայեցակարգից բխող միջոցառումների աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) այդ միջոցառումների իրականացման ապահովման նպատակով կազմակերպում է նիստեր, անցկացնում դիտարկումներ, ամփոփում և մշակում դրանց արդյունքները և դրանց ընթացքում ստացված դիտողություններն ու առաջարկությունները:

2. Հանձնաժողովն իր աշխատակարգն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին և սույն աշխատակարգին համապատասխան:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3. Հանձնաժողովի խնդիրն ինտեգրված կադաստրի (այսուհետ՝ ԻԿ) հայեցակարգից (այսուհետ՝ հայեցակարգ) բխող միջոցառումների ծրագրով (այսուհետ՝ ծրագիր) նախատեսված ընթացիկ աշխատանքների կազմակերպումն ապահովելն է:

4. Հանձնաժողովն իր խնդրի կատարման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) կազմակերպում է քննարկումներ ծրագրով նախատեսված աշխատանքների կազմակերպման և իրականացման հարցերով.

2) քննարկումների արդյունքներից ելնելով՝ մշակում է առաջարկություններ ԻԿ-ի համակարգում ներգրավված պետական կառավարման համակարգի և այլ իրավասու մարմինների համար և աջակցում է աշխատանքների արդյունավետ իրականացմանը:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5. Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները.

2) կազմակերպում է քննարկումներ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ.

3) նշանակում է հանձնաժողովի նիստի անցկացման վայրը, օրը և հաստատում օրակարգը.

4) հրավիրում և նախագահում է հանձնաժողովի նիստերը, ներկայացնում հանձնաժողովն այլ մարմիններում և կազմակերպություններում:

6. Հանձնաժողովի նախագահի տեղակալը նախագահի բացակայության դեպքում փոխարինում է հանձնաժողովի նախագահին:

7. Հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է աշխատանքային պլանի հիման վրա, որը հաստատում է հանձնաժողովի նախագահը:

8. Հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով:

9. Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ:

10. Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովը կարող է ստեղծել աշխատանքային խմբեր, հրավիրել փորձագետների, այդ թվում՝ այլ պետական մարմիններից, գործընկեր պետություններից, միջազգային և այլ կազմակերպություններից:

11. Հանձնաժողովի նիստերի արձանագրություններն ստորագրում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:

12. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների առնվազն 2/3-ը:

13. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ նիստին ներկա հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է: Եթե հանձնաժողովի որոշման վերաբերյալ որևէ անդամ ունի հատուկ կարծիք, ապա այն գրավոր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրությանը և հանդիսանում է վերջինիս անբաժանելի մասը:

14. Հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ նիստերին կարող են մասնակցել նաև հրավիրյալ անձինք:

15. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) նիստի օրակարգը ոչ ուշ, քան 2 օր առաջ ուղարկում է հանձնաժողովի անդամներին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նիստին հրավիրված անձանց.

2) ամփոփում է ԻԿ-ի հայեցակարգից բխող միջոցառումների իրականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պետական մարմիններից ստացված առաջարկություններն ու դիտողությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ